Նրանք պիտի լինեն ամենից առաջ՝ օրէնսդէտ, հայոց օրէնքներին քաջածանօթ եւ հաւատարմութեամբ ծառայեն հայոց տանը: Ապա՝ եթէ «մայր» դատաւորի հաստատութեան հրովարտակի խօսքերով ասենք. «Փակեցաք ակն եւ ձեռն քոյ, զի մի՛ հայեսցես երեսս եւ արժանաւորութիւնս դանդատողի եւ դատախազի*), եւ մի՝ ընդունեսցի ձեռն քոյ կաշառս ի վերայ իրաւանց, կալով մնասցես ի աթոռ դատաստանի դատել քաղցրութեամբ ժողովուրդն» (կա):

Հետաքրքրական է, թէ Շահամիրեանը ի՛նչ դատական հիմնարկութիւններ է առաջարկում:

Դատական բարձրագոյն հիմնարկութիւնը «Ծայրագոյն» դատարանն է կամ — ինչպէս ինքն է ասում — «Ծայրագոյն ապարան դատաստանի հայոց»**) կամ «ապարան դատաւորաց հայոց» (ճխբ):

Գտնուում է երկրի մայրաքաղաքում եւ բաղկացած է 25 անդամներից, որոնք ընտրուում են Ազգ. ժողովից եւ 3 տարի ժամանակով: 25-ից մէկը ընտրուում է առանձին՝ դատարանի նախագահութեան համար եւ կոչւում է «մայր» դատաւոր կամ «պետ դատաւորաց հայոց», իսկ մնացած 24 հոգին կոչւում են «խորհրդակից դատաւորք» կամ սովորաբար դատաւորք հայոց» (իբ, ծթ, եա, ճխբ, մէ):

Բացի դրանից, Ծայրագոյն դատարանն ունի նաեւ 12 պաշտօնեաներ, «կրթեալ դրպրութեան եւ ատենաբանութեան եւ հմուտ օրինաց» (իգ), ընտրուած նոյնպէս Ազգ. ժողովի կողմից եւ 3 տարի ժամանակով:

Թէ ի՛նչ է սրանց պաշտօնը — ճիշդ որոշուած չէ. սակայն կարելի է եզրակացնել, որ նրանք դատարանի քարտուղարներն են եւ միեւնոյն ժամանակ նաեւ արդարութեան եւ օրէնքի պաշտպանները: Անշուշտ դա է պատճառը, որ նրանք «դպիր ատենաբան» են կոչւում (կ): Նրանք համապատասխանում են մեր ներկայ դատախազներին, բայց միայն այն տարբերութեամբ, որ օրէնքի եւ պետութեան շահերի պաշտպանութեան հետ միասին, պաշտպանում են եւ ժողովրդի — աւելի ճիշդ ներկայ դէպքում — մեղադրեալի շահերը: Ուրիշ խօսքով՝ նրանք իրենց մէջ միացնում են ե՛ւ դատախազի պաշտօնը, ե՛ւ երդուեալ հաւատարմատարի պարտականութիւնները: Եւ պիտի ասել, որ վերջին հանգամանքը աւելի է չեշտուած նրանց պաշտօնի մէջ, քան առաջինը: Ապացոյց՝ 226-րդ օրէնքը, որ ասում է. «Որում դպիր ատենաբան, որ զոյգ ի հնարս, զի ըստ օրինօք զերթուսցէ մեղաւորն ի վճռոյ մահուանէ, սիրեցեալ լինի ամենեցուն»:

Այդ մեծ պարտականութիւնը կատարել կարողանալու համար՝ օրէնքը դպիր-ատենաբանին պատուիրում է. «Ազատապէս ջատագովել օրէնքները եւ Հայաստանեաց կարգերն ու կանոնները». նրա լեզուն «մի՛ լռեսցէ եւ սիրտ մի երկիցէ». նրա պարտականութիւնն է «ազատապէս բանալ բերան իւր եւ ճառել առաջի ատենի իրաւունս եւ արդարութիւն օրինաց Հայաստանեաց» (կ):

Դժբախտաբար, ծայրագոյն դատարանի գործառնութիւնները եւս ճշդօրէն որոշուած չեն. սակայն եղած օրէնքներից պէտք է եզրակացնել, որ նա Հայաստանի վճռաբեկ ատեանը պիտի լինի, նման ռուսական դատաստանական պալատին: Շրջանային դատարանների բոլոր վճիռները — բացի քրէականներից, որ վճռաբեկման չեն ենթարկւում — ենթակայ են ծայրագոյն դատարանի վճռաբեկման: Շրջանային դատարանի վճռից դժգոհ կողմերը, 15 օրուան ընթացքում, դիմում են ծայրագոյն դատարանին եւ վճռի բեկումն խնդրում (մէ, մբ, միա):

Դատական երկրորդ հիմնարկութիւնը, վերից-վար, նահանգական կամ շրջանային դատարանն է: Դատական տեսակէտից՝ Հայաստանը բաժանուում է 60 շրջանի, որոնցից իւրաքանչիւրն ունի իր նահանգական կամ շրջանային դատարանը: Սրանց նախագահներին — ուրեմն 60 հոգի—ընտրում է Ազգ. ժողովը իր կազմից, 3 տարի ժամանակով: Նախագահները իրենց շրջաններում, բնակչութեան միջից ընտրում են 8 հոգի «բարի եւ օ-

*) «Դատախազ» բառը հեղինակը միշտ գործ է ածում մեղադրեալի, ամբաստանեալի մտքով:

**) Այ դանունով հեղինակը երբեմն կոչում է, անշուշտ սխալմամբ, 12-ի խորհուրդը: